



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2023 թվականի թիվ 62-Ա

ք. Երևան

#### «ԳԼՈՐԱԼ ՔՈՆԹԵՆԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԳԼՈՐԱԼ ՔՈՆԹԵՆԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության 2023 թվականի հունիսի 28-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «ԳԼՈՐԱԼ ՔՈՆԹԵՆԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԳԼՈՐԱԼ ՔՈՆԹԵՆԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՔՅԱՆ

2023թ. հունիսի 30  
ք. Երևան

<b>Տեսալսողական ծրագրի անվանումը</b>	<b>Ժամկետը</b>
«Карусель International» («Karusel International») «Дом кино» «Время: далекое и близкое» «Телекафе» «Музыка Первого» «Победа» «Бобёр» «О!» «Поехали!» «Дом кино премиум»	պայմանագրի գործողության ժամկետով